Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍՏԷՐԷՕՍԿՕՊԻՔ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Պ. Վրոյրը ձեռնարկել է մի գեղեցիկ գործ, որի սկիզբը դրել է մեր մէջ հանգուցեալ Ց. Քիւրքչեանը, այն է՝ պատրաստել հայրենի վանքերի ու այլ աւերակների ստէրէօսկոպիք պատկերները։ Մեր խմբագրութեան ուղարկուած են այդ պատկերներից ս. Էջմիածնի զանազան տեսարանների ընդօրինակութիւններ, որոնք բաւական յաջողուած պատկերներ են։

Պ. Վրոյրի մեզ ուղարկուած ցուցակից երևում է, որ առայժմ պատրաստել և հրատարակել է հետևեալ ստէրէօսկոպիքական պատկերները։

ԳՈՒԴԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ. Հաղբատի, Սանահնի, Սևորդեաց ձորի և շրջակայքի նշանաւոր վայրերի տեսարաններից բաղկացած. (գինը 25 պատկերի Ա. մաս. 6 ռ.)

ԱՆԻ Ա մասը. 50 պատկերներից բաղկացած (գ. 10 ռ.)։

ԱՆԻ Բ. մասը. նոյնպէս 50 պատկերներից բաղկացած (գ. 10 ռ.)։

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ՇՐՋԱՊԱՏԿԸ (Ս. Էջմիածնի հիմնարկութեան 1600-ամեակի առիթով Ա. մասը 25 պատկերներից բաղկացած—Ս. Էջմիածնի, Գայիանէի, Հռիփսիմէի, Ճեմարանի, Զուարթնոց նոր պեղուած եկեղեցու և այլ նշանաւոր տեսարաններ. (գինը 6 ռ.)։

Սև պատրաստուում են հրատարակութեան համար ԱՆԻԻ Գ. մասը, Գեղարքունիք, Սիւնիք, Արարատ և Շիրակ։

«ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԼՐԱԲԵՐ»

«Իւզանդիոն» լրագրում կարդում ենք, որ Մպահանի մօտ գտնուած Նոր-Ջուղայի Ամենափրկչեան հռչակաւոր վանքը, որ ունի իւր տպարանն ու մատենադարանը, սկսել է հրատարակել մի ամսաթերթ «Նոր-Ջուղայի լրաբեր» անունով իբրև զուտ թեմական ամսագիր, որ պէտք է կարևոր եկեղեցական, դպրոցական ու թեմական տեղեկութիւններն ու շրջաբերականները հաղորդէ Պարսկա Հնդկաստանի վիճակին։ «Նոր Ջուղայի լրագրի» առաջին համարում զետեղուած է եղել այդ թեմի հայերի վիճակագիրը, որոնց թիւը համարուած է 40,000 հոգի, բացի Հնդկաստանի, Բիրմանիայի և Ջաւայի հայերից։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—Նոր-Նախիջևանից հաղորդում են մեզ հետևեալ տեղեկութիւնները։